ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ ԿՄԱՍՆԱԿՑԵՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

Հուլիսի 1-ին «Երկիր և մշակույթ» բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի նախաձեռնությամբ սփյուռքահայ 25 կամավորներ և Գևորգյան Ճեմարանի ուսանողներ մեկնեցին Սաղմոսավանք եւ Քարինտակ /Արցախ/՝ մասնակցելու Սաղմոսավանքի եւ Քարինտակ գյուղի դպրոցի վերականգնման աշխատանքներին: ԱՄՆ-ից, Անգլիայից և Ֆրանսիայից ժամանած կամավորները կաշխատեն երեք շաբաթ, որից հետո նրանց կփոխարինի սփյուռքահայ կամավորների երկրորդ խումբը:

Նախորդ տարիներին սփյուռքահայ կամավորների մասնակցությամբ վերականգնվել են նաև Տաթև գյուղի Սբ. Մինաս /17-րդ դար/ եւ Գոգարանի Սբ. Աստվածածին /5-րդ դար/ եկեղեցիները: Վերջինիս օծումը կատարվեց ձեռամբ Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի 1996 թվականին:

Եկեղեցիների վերականգնման աշխատանքները կազմակերպությունը համաձայնեցնում է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ճարտարապետական վարչության հետ:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ